ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի շինարարության և գիտատեխնիկական նորմավորման վարչության պետի պարտականությունները կատարող Աղասի Հովսեփյանի 2019 թվականի նոյեմբերի 13-16-ը Ղազախստանի Հանրապետության Ալմաթի քաղաք գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝ Աղասի Հովսեփյան:

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի շինարարության և գիտատեխնիկական նորմավորման վարչության պետի պարտականությունները կատարող:

3. Գործուղման վայրը և ժամկետը՝ Ղազախստանի Հանրապետություն, քաղաք Ալմաթի, 2019 թվականի նոյեմբերի 13-ից 16-ը ներառյալ:

4. Հրավիրող կողմը՝ «Ղազախստանի ճարտարապետության և շինարարության գիտահետազոտական և նախագծային ինստիտուտ» բաժնետիրական ընկերություն:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցել սեյսմակայուն շինարարության ոլորտում Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) անդամ պետությունների բազային կազմակերպության առաջին նիստին:

Նիստին մասնակցում էին 10 երկրների՝ Հայաստանի, Բելառուսի, Ղրղզստանի, Ղազախստանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի, Ադրբեջանի, հանրապետությունների, Ռուսաստանի Դաշնության, Մոնղոլիայի Ժողովրդական Հանրապետության շինարարության ոլորտի պետական կառավարման մարմինների, գիտահետազոտական և նախագծային կազմակերպությունների և «ԼԻՐԱ» համակարգչային հաշվողական ծրագրային համալիրը մշակող՝ «ԼԻՐԱ ՍԵՐՎԻՍ» բաց բաժնետիրական ընկերության ներկայացուցիչները:

Նիստը կազմակերպել էր «Ղազախստանի ճարտարապետության և շինարարության գիտահետազոտական և նախագծային ինստիտուտ» բաժնետիրական ընկերությունը, որին սեյսմակայուն շինարարության ոլորտում ԱՊՀ անդամ պետությունների բազային կազմակերպության մասին ԱՊՀ տնտեսական խորհրդի 2019 թվականի հունիսի 21-ի որոշմամբ շնորհվել է սեյսմակայուն շինարարության ոլորտում ԱՊՀ անդամ պետությունների Բազային կազմակերպության կարգավիճակ:

6. Քննարկված թեմաները/հարցերը՝

Ներկայացվեց ԱՊՀ անդամ պետությունների բազային կազմակերպության ստեղծման կարևորությունը, իրավական, տեխնիկական և կազմակերպչական խնդիրները:

Քննարկվեցին սեյսմակայուն շինարարության ոլորտում ԱՊՀ անդամ պետություններում համաձայնեցված տեխնիկական քաղաքականության վարելու նպատակով սեյսմակայուն շինարարության ոլորտի նորմատիվ փաստաթղթերի ներդաշնակեցման և կատարելագործման, միասնական նորմատիվ բազայի ստեղծման, սեյսմակայուն շինարարության ոլորտում ԱՊՀ անդամ պետություններ գիտական հաստատությունների և մասնագետների որակավորման բարձրացման ծրագրերի ինտեգրման գիտական հիմքերի ստեղծման, գիտատարողունակ արտադրանքի մշակման լավագույն փորձի ներդրման, բարձր տեխնոլոգիաների օգտագործման և հետագա համագործակցության զարգացման հիմնախնդիրները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Մասնակիցների կողմից զեկույցներ և հաղորդումներ ներկայացվեցին նիստի օրակարգում ներառված հետևյալ հարցերի շուրջ.

- Բազային կազմակերպության կառուցվածքը և առաջնահերթ խնդիրները,
- Սեյսմակայուն շինարարության ոլորտի նոր նորմերի առանձնահատկությունները,
- Ղազախստանի հանրապետության շինարարության ոլորտի նորմատիվատեխնիկական բազայի բարեփոխումները,
- Գոյություն ունեցող շենքերի սեյսմաանվտանգության ապահովումը և Ալմաթի քաղաքի շենքերի և կառույցների անձնագրավորումը,
- Սեյսմակայուն շինարարության ոլորտում առկա խնդիրները և լուծման հնարավորությունները,
- Սեյսմակայուն շինարարության նորմերի զարգացման և ներդաշնակեցման խնդիրները,
- Բազային կազմակերպության 2020 թվականի աշխատանքային ծրագրի հաստատումը,
- Բազային կազմակերպության 2-րդ նիստի անցկացման վայրի որոշումը:

Նիստի օրակարգում ներառված զեկույցների և հաղորդումների շրջանակում կազմակերպվեց «Կլոր սեղան» քննարկում: Մասնակիցների կողմից ծավալվեց մտքերի փոխանակություն և արտահայտվեցին դիրքորոշումներ:

Իմ կողմից ներկայացվեց Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիների ընթացքում սեյսմակայուն շինարարության ոլորտում նորմատիվատեխնիկական փաստաթղթերի արդիականացման ուղղությամբ իրականացված աշխատանքները: Նշվեց, որ՝

- Համաշխարհային բանկի աջակցությամբ միջազգային կոնսորցիումի («ԱԻՐ Վորլդվայդ» (ԱՄՆ), «ԳԵՄ Ֆաունդեյշն» (Իտալիա) և «ԳԵՈՌԻՍԿ» գիտահետազոտական ընկերություն (Հայաստան)) կողմից կազմվել է Հայաստանի Հանրապետության տարածքի

երկարաժամկետ սեյսմիկ վտանգի հավանականային գնահատմամբ 1:500000 մասշտաբի նոր քարտեզ:

- Վերանայվեց ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» ազգային շինարարկան նորմերը: Վերամշակված և արդիականացված նորմերի նախագծը ներկայումս գտնվում է քննարկման և հաստատման փուլում:
- Մշակվեց Հայաստանի Հանրապետությունում շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման ռազմավարություն:
- Նախատեսվում է իրականացնել շենքերի և շինությունների անձնագրավորում: Այդ նպատակով մշակվում է նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անձնագրավորման կարգ:

Քննարկումների ընթացքում բարձրացված հարցերի վերաբերյալ հայտնել եմ դիրքորոշում և մասնագիտական կարծիք՝ սեյսմակայուն շինարարության ոլորտում ԱՊՀ անդամ պետությունների միասնական նորմատիվ բազայի ստեղծման ուղղությամբ անհրաժեշտ նախադրյալների և հնարավորության մասին:

Նախատեսված ծրագրային միջոցառումների շրջանակում այցելություն կազմակերպվեց «Ղազախստանի ճարտարապետության և շինարարության գիտահետազոտական և նախագծային ինստիտուտ» բաժնետիրական ընկերություն կենտրոնական գիտահետազոտական փորձարարական լաբորատոր բազա, որտեղ իրականացվեց օդափոխվող ճակատի տարածական դրվագային կոնստրուկցիայի թրթռամեքենայով հարկադրական տատանումների առաջացմամբ ցուցադրական բնապայման փորձարկում:

Այցելություն կատարվեց նաև Ալմաթի քաղաքում կառուցվող երկու բազմաբնակարան շենքային համալիրների շինարարական հրապարակներ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

1) Ընդգծել նիստի մասնակիցների կողմից ցուցաբեված շահագրգռվածությունը սեյսմակայուն շինարարության հարցերով սեյսմակայուն շինարարության ոլորտում բազային կազմակերպության հետ շինարարության ոլորտի լիազորված պետական մարմինների և ԱՊՀ երկրների շինարարական ընկերությունների համագործակցության կազմակերպման հարցում:

2) Դիտարկել ԱՊՀ անդամ պետությունների սեյսմակայուն շինարարության նորմատիվ փաստաթղթերի միասնական տեղեկատվական բազայի ձևավորման հնարավորությունը:

3) Հավանություն տալ ԱՊՀ անդամ պետությունների սեյսմակայուն շինարարության ոլորտում միասնական նորմերի մշակման սխեմայի մոտեցումներին,

4) ԱՊՀ անդամ պետությունների սեյսմակայուն շինարարության ոլորտում գործող նորմատիվ փաստաթղթերի բազայի վերլուծության համար որոշել նորմատիվ փաստաթղթերի առաջնահերթ նշանակության բաժինները:

5) Հաստատվեց Բազային կազմակերպության 2020 թվականի ծրագիրը:

6) Բազային կազմակերպության 2-րդ նիստի անցկացման վայրի ընտրության հարցում ընդունվեց Ղրղզստանի ներկայացուցչի կողմից ներկայացված հայտը և որոշվեց այն անցկացնել Բիշքեկ քաղաքում:

Տեղեկատվության փոխանակման նպատակով մասնավոր հանդիպումներ և քննարկումներ են կայացել տարբեր հանրապետությունների ներկայացուցիչների հետ և ձեռք են բերվել հետագա համագործակցության պայմանավորվածություններ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հիմք ընդունելով քննարկման արդյունքները՝ ընթացիկ տեղեկատվության համակենտրոնացման, պահպանման, արագ փոխանակման, հետագա առաջարկությունների ներկայացման, շարունակական համագործակցության և քննարկումների հարթակ ապահովելու համար հավանություն տրվեց Բազային կազմակերպության համացանցային կայք ստեղծելու առաջարկությանը:

Միջոցառումն անցավ արդյունավետ և կառուցողական մթնոլորտում՝ ստեղծելով նախադրյալներ և հնարավորություն ԱՊՀ անդամ պետությունների սեյսմակայուն շինարարության ոլորտում համաձայնեցված տեխնիկական քաղաքականության վարելու, միասնական նորմեր մշակելու և նորմատիվ փաստաթղթերի տեղեկատվական բազա ձևավորելու, համակողմանի համագործակցություն և փորձի փոխանակում ապահովելու համար:

10. Գործուղվող՝ Աղասի Հովսեփյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը ***20.11.2019 թվական***